

Բժշկութեան մէջ, *վիժումը*⁹⁷ յղիութեան ընդհատումն է, որ կրնայ պատահիլ ինքնուրոյն ձեւով (*հնքնաբեր վիժում* = Spontaneous Abortion) կամ կը կատարուի կանխամտածուած վիրահատութեամբ մը (*Արհեստական վիժում* = Artificial Abortion): Վիժումը, ընդհանրապէս, կրնայ պատճառ դառնալ կարգ մը բժշկագիտական բարդութիւններու: Իսկ *արհեստական վիժումի* պարագային, բժշկագիտական սպասելի ու անսպասելի բարդութիւններու (Complications) կողքին, կրնան նաեւ ընկերային (սոցիալ), իրաւական ու բարոյագիտական հարցեր յառաջանալ:

Մարդկային սաղմի հանդէպ մեր ունեցած բարոյական դիրքաւորումը որոշ առնչութիւն ունի նաեւ *Զգացումի բարոյագիտութեան*⁽⁹⁸⁾ (Moral Sense Theory) եւ *կարեկցութեան* (Sympathy) հետ: Այս հարցը մասնաւոր կարեւորութիւն կը ստանայ եւ մարդոց ուշադրութեան կ'արժանանայ, երբ խնդրոյ առարկայ է մարդկային սաղմի վիժումը (Abortion):

Յարդ, բարոյական քննարկումներու ատեն, մենք նկատի ունէինք միայն՝ մարդ-մարդ յարաբերութիւնը, ուր կը շեշտուէր մարդկային գործակցութեան կարողութիւնը եւ այս ուղիով կարելի էր բարոյական սկզբունք մը ընդհանրացնել եւ բարոյական հասարակութիւն մը կազմել: Այլ խօսքով մարդ-մարդ յարաբերութեան մէջ գոյութիւն ունին փոխադարձ բարոյական պահանջք եւ պարտաւորութիւն:

Մարդկային սաղմի պարագային սակայն, դեռ կը պակսի գործակցութեան վերոյիշեալ կարողութիւնը, որովհետեւ սաղմը տակաւին *անձ*⁽⁹⁹⁾ (Person) մը չէ, *բարոյական ենթակայ* (Moral Subject) մը չէ կամ ան՝ «*մեզմէ մէկը*» չէ ու տակաւին՝ անդամ չէ մարդկային ընկերային ու բարոյական հասարակութեան:

Նորածին երեխաները, սակայն, իրենց ծնունդով արդէն անդամ կը դառնան մարդկային բարոյական հասարակութեան, հակառակ անոր որ մարդկային գործակցութեան կարողութիւնը տակաւին լման չէ զարգացած անոնց մօտ, բայց արդէն այդ ընթացքին մէջ է: (Այս երկդիմութիւնը առկայ է նաեւ երեխայի մօր պարագային, որ յղութեան շրջանին տակաւին մայր չէ եւ միայն ծնելէն յետոյ կը մայրանայ):

Բարոյագիտական տեսանկիւնէն դիտուած, *վիժումին* առնչուած տարակարծութիւններ կան երկու տարբեր դիրքորոշումներով՝ թեր («Pro-Choice») ու դէմ («Pro-Life»), որոնք *արհեստական վիժումի* արտօսութեան կամ արգելքի ջատագովներն են:

Յիշեալ երկու պարագաներուն ալ պէտք է անպայման զանազանել, մէկ կողմէն՝ դեռ չծնած սաղմին իսկ միւս կողմէն՝ յղի կնոջ բարոյական իրավիճակները:

(98) **Զգացումի բարոյագիտութիւն** (Moral Sense Theory) տեսութեան մասին, տե՛ս Մաս – 5, Էջ 204:

(99) **Անձ** (Person) հասկացութեան մասին տե՛ս Մաս – 9, Էջ 379: